

Կ Ա Ր Գ

ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԻ ԵՎ ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՄԱՆ, ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ԱՎԵԼԻ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԿԱԶՄԵԼՈՒ

1. ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Անապահովության նպաստ ստանալու իրավունք ունի սույն որոշմամբ հաստատված ընտանիքի անապահովության գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված այն ընտանիքը, որի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը ցածր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմից և ընտանիքի համար հաշվարկված անապահովության նպաստի չափը բարձր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված անապահովության նպաստի նվազագույն չափից:

2. Ընտանիքի անապահովության գնահատման համար ներկայացված դիմումը համարվում է անապահովության նպաստ ստանալու համար տրված դիմում, իսկ սոցիալական գործը պահպանվում է ընտանիքի սոցիալական գնահատման և սոցիալական աջակցության տեղեկատվական ենթահամակարգում (այսուհետ՝ Գնահատման համակարգ) ֆինանսական փաստաթղթերին համահավասար:

3. Անապահովության նպաստ ստանալու իրավունքը ծագում է անապահովության նպաստ նշանակելու օրվա դրությամբ և անապահովության նպաստը վճարվում է դիմելու օրվա ամսվան հաջորդող ամսվանից՝ մինչև անապահովության նպաստի իրավունքի դադարեցման հիմքի առաջացումը, սակայն ոչ ավելի քան տասներկու ամիս ժամկետով:

4. Անապահովության նպաստը նշանակելու կամ մերժելու կամ անապահովության նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու կամ անապահովության նպաստի չափի փոփոխության

վերաբերյալ վարչական ակտն ընդունվում է ինքնաշխատ եղանակով՝ Գնահատման համակարգում, որի արդյունքում ձևավորվում է էլեկտրոնային կարգադրություն (այսուհետ՝ Կարգադրություն)՝ վավերականության ստուգման նպատակով համապատասխան ծածկագրով՝ առանց ստորագրության՝ դիմումի ներկայացման օրվանից 30 օրվա ընթացքում՝ համաձայն Ձև 1-ի, Ձև 2-ի, Ձև 3-ի և Ձև 4-ի: Դիմումի ներկայացման օր է համարվում օրենսդրությամբ սահմանված դիմումը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելու օրը:

5. Անապահովության նպաստի նշանակումը մերժվում է, եթե՝

1) դիմումը, դրանում ներկայացված տվյալները կամ փաստաթղթերը չեն համապատասխանում օրենսդրությամբ և սույն որոշմամբ սահմանված պայմաններին և պահանջներին.

2) ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը բարձր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմից կամ առկա է սույն որոշման N 1 հավելվածով սահմանված որևէ բացառող գործող կամ ընտանիքի կեցության պայմանների ուսումնասիրությանը արդյունքը 0 է.

3) ընտանիքի համար հաշվարկված անապահովության նպաստի չափը ցածր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված անապահովության նպաստի նվազագույն չափից.

4) անապահովության նպաստ ստանալու համար դիմողի կողմից ներկայացվել են ոչ հավաստի կամ կեղծ տվյալներ.

5) սույն որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով ընտանիքի անդամի՝ որպես աշխատանք փնտրող անձի կողմից հաշվառվելու համար դիմում չներկայացվելու դեպքում:

6. Անապահովության նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է, եթե՝

1) պարզվում է, որ ընտանիքի որևէ անդամի համար ներկայացված՝ անապահովության նպաստ ստանալու իրավունքի որոշման համար հիմք հանդիսացող տվյալները (փաստաթղթերը) հավաստի չեն կամ կեղծ են.

2) ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը բարձր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմից կամ առկա է սույն

որոշման N 1 հավելվածով սահմանված որևէ բացառող գործող կամ ընտանիքի կեցության պայմանների ուսումնասիրությանը արդյունքը 0 է.

3) ընտանիքի համար հաշվարկված անապահովության նպաստի չափը ցածր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված անապահովության նպաստի նվազագույն չափից.

4) լրացել է սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված ժամկետը.

5) ընտանիքի անդամը դուրս է մնացել պարտադիր կրթությունից.

6) մահացել է ընտանիքի միակ անդամը (կամ բոլոր անդամները).

7) ընտանիքը հրաժարվել է անապահովության նպաստ ստանալու իրավունքից՝ անհատական օգտահաշվի միջոցով.

8) ընտանիքի անդամը գրավադրել է անշարժ գույք:

7. Անապահովության նպաստ ստանալու իրավունքը և անապահովության նպաստի վճարումը դադարեցվում են սույն հավելվածի 6-րդ կետի 2-8-րդ ենթակետերում նշված հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ սույն հավելվածի 6-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքում՝ դրանց հայտնաբերման ամսվանից:

8. Սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված ժամկետը լրանալու հիմքով անապահովության նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու դեպքում Կարգադրություն չի ձևավորվում:

2. ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունք ունի սույն որոշմամբ հաստատված ընտանիքի անապահովության գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված, անապահովության նպաստ ստանալու իրավունք չունեցող այն ընտանիքը, որի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը ցածր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված անապահովության նպաստ ստանալու իրավունք վերապահող սահմանային շեմի 130 տոկոսի արժեքից:

10. Եթե սույն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգով ընտանիքի անապահովության գնահատման համար դիմում ներկայացրած անձի ընտանիքը բավարարում է եռամսյա հրատապ օգնություն ստանալու պայմաններին, ապա անհատական օգտահաշվի միջոցով ծանուցում ստանալուց հետո ընտանիքը չափահաս անդամներից մեկը ներկայացնում է դիմում՝ համաձայն Ձև N5-ի: Տվյալ դեպքում, ընտանիքի անապահովության գնահատման համար, սույն որոշման N 1

հավելվածով սահմանված ընտանիքի կեցության պայմանների ուսումնասիրության նպատակով կրկին տնայց չի կատարվում, եթե նախորդ տնայցից դեռևս չի անցել 3 ամիս և ընտանիքի անապահովության գնահատման համար հիմք է ընդունվում նախկինում կատարված ընտանիքի կեցության պայմանների ուսումնասիրության արդյունքները:

11. Եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքը ծագում է եռամսյա հրատապ օգնությունը նշանակելու օրվա դրությամբ և վճարվում է դիմելու օրվա ամսվան հաջորդող ամսից՝ մինչև եռամսյա հրատապ օգնության վճարման դադարեցման հիմքի առաջացումը, սակայն ոչ ավելի քան երեք ամիս ժամկետով:

12. Եռամսյա հրատապ օգնությունը նշանակելու կամ մերժելու կամ եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքը դադարեցնելու վերաբերյալ վարչական ակտն ընդունվում է ինքնաշխատ եղանակով՝ Գնահատման համակարգում, որի արդյունքում ձևավորվում է Կարգադրություն՝ վավերականության ստուգման նպատակով համապատասխան ծածկագրով՝ առանց ստորագրության՝ դիմումի ներկայացման պահից 30 օրվա ընթացքում՝ համաձայն Ձև 6-ի, Ձև 7-ի և Ձև 8-ի: Դիմումի ներկայացման օր է համարվում սույն որոշմամբ սահմանված դիմումը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելու օրը:

13. Եռամսյա հրատապ օգնության նշանակումը մերժվում է, եթե՝

1) անապահովության գնահատման և եռամսյա հրատապ օգնություն ստանալու համար ներկայացված դիմումները և դրանցում ներկայացված տվյալները կամ փաստաթղթերը չեն համապատասխանում օրենսդրությամբ և սույն որոշմամբ սահմանված պայմաններին և պահանջներին.

2) ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը բարձր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 130 տոկոսից, առկա է սույն որոշման N 1 հավելվածով սահմանված որևէ բացառող գործող կամ ընտանիքի կեցության պայմանների ուսումնասիրությանը արդյունքը 0 է.

3) ընտանիքը ձեռք է բերել անապահովության նպաստ ստանալու իրավունք.

4) դիմողի կողմից ներկայացվել են կեղծ կամ ոչ հավաստի տվյալներ.

5) ընթացիկ տարվա ընթացքում ընտանիքին երեք անգամ նշանակվել է եռամսյա հրատապ օգնություն.

6) սույն որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով ընտանիքի անդամի՝ որպես աշխատանք փնտրող անձի կողմից հաշվառվելու համար դիմում չներկայացվելու դեպքում:

14. Եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքը դադարեցվում է, եթե՝

1) պարզվում է, որ ընտանիքի որևէ անդամի համար ներկայացված՝ եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքի որոշման համար հիմք հանդիսացող տվյալները (փաստաթղթերը) հավաստի չեն կամ կեղծ են.

2) ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը բարձր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 130 տոկոսից, առկա է սույն որոշման N 1 հավելվածով սահմանված որևէ բացառող գործող կամ ընտանիքի կեցության պայմանների ուսումնասիրությանը արդյունքը 0 է.

3) ընտանիքը ձեռք է բերել անապահովության նպաստ ստանալու իրավունք.

4) լրացել է սույն հավելվածի 11-րդ կետով սահմանված ժամկետը.

5) մահացել է ընտանիքի միակ անդամը (կամ բոլոր անդամները).

6) ընտանիքը հրաժարվել է եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքից՝ անհատական օգտահաշվի միջոցով.

7) ընտանիքի անդամը դուրս է մնացել պարտադիր կրթությունից.

8) ընտանիքի անդամի կողմից գրավադրվել է անշարժ գույք:

15. Եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքը և եռամսյա հրատապ օգնության վճարումը դադարեցվում են սույն հավելվածի 14-րդ կետի 2-8-րդ ենթակետերում նշված հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ սույն հավելվածի 14-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքում՝ դրանց հայտնաբերման ամսվանից:

16. Սույն հավելվածի 11-րդ կետով սահմանված ժամկետը լրանալու հիմքով եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքը դադարեցնելու դեպքում Կարգադրություն չի ձևավորվում:

17. Երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու միանվագ հրատապ օգնության իրավունք ունի դիմելու ամսվա դրությամբ անապահովության նպաստի իրավունք ունեցող այն ընտանիքը, որի անչափահաս անդամներից մեկն ընդունվել է հանրակրթական ուսումնական հաստատության առաջին դասարան:

18. Երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու միանվագ հրատապ օգնություն ստանալու համար ընտանիքի չափահաս անդամներից մեկը անհատական օգտահաշվի միջոցով ներկայացնում դիմում՝ համաձայն Ձև 9-ի:

19. Երեխայի առաջին դասարան ընդունվելու միանվագ հրատապ օգնության նշանակման կամ մերժման դեպքում ձևավորվում է Կարգադրություն՝ համաձայն Ձև 10-ի և 11-ի, վավերականության ստուգման նպատակով համապատասխան ծածկագրով՝ առանց ստորագրության՝ դիմումի ներկայացման պահից 30 օրվա ընթացքում: Երեխայի առաջին դասարան ընդունվելու համար միանվագ հրատապ օգնությունը վճարվում է դիմելու ամսվան հաջորդող ամսվա ընթացքում:

20. Անապահովության նպաստ կամ հրատապ օգնություն նշանակելու կամ մերժելու կամ վճարումը դադարեցնելու Կարգադրության մասին դիմողն իրազեկվում է իր անհատական օգտահաշվի միջոցով: Դիմողը դրանց մասին կարող է ստանալ նաև ծանուցում՝ իր նախընտրած եղանակով՝ սույն որոշմամբ սահմանված եղանակներով:

3. ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԻ ԵՎ ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

21. Անապահովության նպաստի և հրատապ օգնության վճարումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ այդ նպատակով հատկացված ֆինանսական միջոցների սահմաններում:

22. Միասնական սոցիալական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) սույն որոշման 1-ին հավելվածի 54-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված կարգով ձևավորում է անապահովության նպաստի և հրատապ օգնության ֆինանսական միջոցների մասին հայտ-պահանջագրերը և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

23. Անապահովության նպաստի և հրատապ օգնության վճարումները կատարում է «Պետական նպաստների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով ընտրված վճարող կազմակերպությունը՝ գանձապետական համակարգի միջոցով փոխանցված գումարների հաշվին:

24. Անապահովության նպաստ և հրատապ օգնություն վճարվում է դիմողին՝ անկանխիկ կամ կանխիկ եղանակով՝ հաշվի առնելով «Պետական նպաստների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 5-10-րդ մասերը:

25. Կանխիկ եղանակով վճարելիս վճարման պահին դիմողի բացակայության դեպքում անապահովության նպաստը կամ հրատապ օգնությունը վճարվում է դիմողի ընտանիքի այլ չափահաս անդամին:

26. Դիմողը կարող է ցանկացած ժամանակ դիմել անապահովության նպաստը կամ հրատապ օգնությունը ստանալու եղանակը փոխելու համար, եթե «Պետական նպաստների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անապահովության նպաստը կարող է վճարվել նաև կանխիկ եղանակով:

27. Անապահովության նպաստը կամ հրատապ օգնությունն անկանխիկ եղանակով ստանալու նպատակով դիմողը, ընտանիքի մյուս չափահաս անդամների համաձայնությամբ, ընտրում է Ծառայության հետ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ սոցիալական ապահովության կամ միանվագ դրամական վճարների հաշվի պայմանագիր կնքած բանկին (այսուհետ՝ բանկ): Հաշիվը բացվում է դիմողի անունով, իսկ եթե դիմողը 16 տարեկանից բարձր անչափահասի հոգաբարձուն կամ խնամարկյալն է, ապա խնամարկյալի անունով: Դիմողը կարող է ցանկացած ժամանակ անհատական օգտահաշվի միջոցով փոխել վճարող բանկին:

28. Անապահովության նպաստն անկանխիկ եղանակով վճարվում է Ծառայության հետ սոցիալական ապահովության հաշվի պայմանագիր կնքած բանկերի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ կազմակերպության կողմից Ծառայությանը տրամադրված էլեկտրոնային ցուցակների հիման վրա:

29. Հրատապ օգնությունն անկանխիկ եղանակով վճարվում է Ծառայության հետ միանվագ դրամական վճարների հաշվի պայմանագիր կնքած բանկերի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 287-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ կազմակերպության կողմից Ծառայությանը տրամադրված էլեկտրոնային ցուցակների հիման վրա:

30. Անապահովության նպաստի կամ հրատապ օգնության գումարը կանխիկ վճարման ցուցակում ընդգրկված լինելու և դիմողի կամ ընտանիքի որևէ չափահաս անդամի կողմից չստանալու դեպքում, այն ներառվում է հաջորդ ամսվա վճարման ցուցակ, բայց ոչ ավելի, քան մինչև նպաստ կամ եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքը դադարեցնելու ամիսը ներառյալ:

31. Կանխիկ վճարման դեպքում՝ անապահովության նպաստը կամ հրատապ օգնությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է վճարվել նաև անձի օրինական ներկայացուցչին:

32. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացված ֆինանսական միջոցների ոչ բավարար լինելու դեպքում՝ առաջնահերթ բավարարվում են եռամսյա հրատապ օգնության համար դիմած՝ ավելի բարձր խոցելիության մակարդակ ունեցող ընտանիքների դիմումները՝ համաձայն սույն որոշման Հավելված N 1-ի 10-րդ կետի:

33. Անապահովության նպաստի և հրատապ օգնության վճարման ցուցակները կազմվում են էլեկտրոնային տարբերակով՝ Ծառայության կողմից:

34. Ծառայությունը սույն որոշման N1 հավելվածի 54-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված կարգով վճարման ցուցակները կազմելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում փոխանցում է համապատասխան վճարող կազմակերպություն:

35. Անապահովության նպաստը և հրատապ օգնությունը վճարվում են յուրաքանչյուր ամիս (անհրաժեշտության դեպքում՝ ամսական 2 անգամ):

36. Կանխիկ վճարման ցուցակը (այսուհետ՝ վճարման ցուցակ) կազմվում են՝ համաձայն N 12 և N 13 ձևերի, որի գլխամասում նշվում են տարեթիվը, ամիսը, Ծառայության տարածքային կենտրոնի, վճարող կազմակերպության, բնակավայրի անվանումները և վճարող կազմակերպության համարը:

37. Վճարման ցուցակի ամեն տողում նշվում են դիմողի մասին տվյալները:

38. Վճարման ցուցակի վերջում նշվում են ցուցակում գրանցված նպաստառու կամ հրատապ օգնություն ստացող ընտանիքների թվի, վճարման ենթակա նպաստի կամ հրատապ օգնության, գումարների չափերի ամփոփ տվյալները:

39. Վճարող կազմակերպությունը վճարումն ավարտելուց հետո 3 օրացուցային օրվա ընթացքում՝

1) Կազմակերպություն է հանձնում լրացված վճարման ցուցակները (այդ թվում՝ ռեեստրները):

2) Ծառայություն է հանձնում փոխադարձ հաշվետվության ակտի 2 օրինակ՝ համաձայն սույն Հավելվածի N 13 ձևի:

40. Կազմակերպությունն երկու աշխատանքային օրվա ընթացքում կատարում է ռեեստրների մուտքագրում և Ծառայություն է ներկայացնում վճարումների մասին ամփոփ տեղեկատվություն:

41. Ծառայությունը Կազմակերպությունից ստացված տեղեկատվության հիման վրա երկու աշխատանքային օրվա ընթացքում կնքում է փոխադարձ հաշվետվության ակտերը, որի երկրորդ օրինակը վերադարձվում է վճարող կազմակերպությանը:

4. ԱՎԵԼԻ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ ԿԱԶՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

42. Դիմողի ներկայացրած փաստաթղթերում անապահովության նպաստի կամ հրատապ օգնության իրավունք տվող կամ անապահովության նպաստի չափի փոփոխությունն առաջացնող ոչ հավաստի կամ կեղծ տեղեկությունների կամ տեղեկությունների փոփոխության մասին չտեղեկացնելու հիման վրա ավելի վճարված գումարները ենթակա են վերադարձման պետական բյուջե, որի կապակցությամբ Գնահատման համակարգում ինքնաշխատ ձևավորվում է ժամանակացույց, նշելով ամսական վերադարձի ենթակա գումարը, ժամկետը և հաշվեհամարը:

43. Ավելի վճարված գումարների չափը ծրագրային եղանակով հաշվարկում և Գնահատման համակարգ է ներառում Ծառայության համապատասխան ստորաբաժանման պատասխանատու աշխատողը: Ավելի վճարված գումարների չափը հաշվարկվում է ավելի գումարների վճարման հանգամանքի հայտնաբերման ամսվան նախորդած 12 ամիսների ընթացքում ստացած ավելի գումարի չափով՝ Գնահատման համակարգի միջոցով:

44. Սույն հավելվածի 43-րդ կետով հաշվարկված գումարը Գնահատման համակարգ ներառելուց հետո՝ ինքնաշխատ ձևավորվում է ժամանակացույց հաշվի առնելով հետևյալ հանգամանքները՝

1) ժամանակացույցը կազմվում է՝ սկսած այն ներառելու հաջորդ ամսից՝ ներառված գումարը հավասարապես բաշխելով ամիսների միջև.

2) եթե ներառված գումարը չի գերազանցում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմը, ապա ժամանակացույցը կազմվում է 3 ամիս ժամկետով.

3) եթե ներառված գումարը գերազանցում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմը, սակայն չի գերազանցում այդ շեմի եռապատիկը, ապա ժամանակացույցը կազմվում է 6 ամիս ժամկետով.

4) եթե ներառված գումարը գերազանցում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի եռապատիկը, ապա ժամանակացույցը կազմվում է 12 ամիս ժամկետով:

45. Վերադարձված գումարի մասին դիմողն անհատական օգտահաշվի միջոցով յուրաքանչյուր ամիս ներբեռնում է անդորրագիրը՝ մինչև ժամանակացույցով նախատեսված ամսվա վերջին օրը ներառյալ: Եթե վերադարձված գումարի չափն ավելի է ժամանակացույցով տվյալ ամսվա համար սահմանված վերադարձման ենթակա գումարի չափից, ապա ավելի վերադարձված գումարի չափը նվազեցվում է հաջորդ ամսվա վճարման ենթակա գումարից:

46. Ժամանակացույցի չկատարման կամ խախտման դեպքում ավելի վճարված գումարները ենթակա են դատական կարգով բռնագանձման, եթե դիմողը երկու ամիս անընդմեջ չի կատարում իր պարտականությունը: Սույն կետում նշված հանգամանքի բացահայտումն իրականացնում է Ծառայության համապատասխան ստորաբաժանման պատասխանատու աշխատողը:

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ No _____
ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անձի _____

Անունը, ազգանունը, հայրանունը

Անձը հաստատող փաստաթղթի համար

Ընտանիքի անդամների թիվը

ՀԾՀ/ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համար

հասցեն

Կանխիկ/անկանխիկ

Վճարման եղանակը

Բանկի անվանումը , փոստային
բաժանմունքի համարը

Դիմումի ամսաթիվը « » 20 թ.

Նշանակել նպաստ _____

դրամ

Վճարել սկսած « » 20 թ. մինչև « »

20

(եթե առկա չէ օրենսդրությամբ սահմանված
դադարեցման հիմք)

ՄՍԾ _____ ՏԿ

Հատուկ ծածկագիր (Վավերականության ստուգիչ ծածկագիր)

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ No _____
ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անձի _____

Անունը, ազգանունը, հայրանունը

Անձը հաստատող փաստաթղթի համար

Ընտանիքի անդամների
թիվը

ՀԾՀ/ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համար

հասցեն

Դիմումի ամսաթիվը « » 20 թ.

Մերժել անապահովության նպաստի նշանակումը

« » 20 թ.

Մերժման «Պետական նպաստների մասին» օրենքի _____
իրավական հիմքը՝

Մերժման փաստացի
հիմքը՝

Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով
(Միասնական սոցիալական ծառայություն) կամ դատական կարգով
(Հայաստանի Հանրապետության վարչական դատարան)՝ 30 օրյա
ժամկետում:

ՄՍԾ _____ ՏԿ

Հատուկ ծածկագիր (Վավերականության ստուգիչ ծածկագիր)

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ No _____
ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԻ ՎՃԱՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անձի _____

Անունը, ազգանունը, հայրանունը

Անձը հաստատող փաստաթղթի համար

Ընտանիքի անդամների

թիվը

ՀԾՀ/ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համար

հասցեն

Դիմումի ամսաթիվը « » 20 թ.

Դադարեցնել նպաստի վճարումը « »
20 թ.

Դադարեցման «Պետական նպաստների մասին» օրենքի _____
իրավական հիմքը՝

Դադարեցման
փաստացի հիմքը՝

Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով
(Միասնական սոցիալական ծառայություն) կամ դատական կարգով
(Հայաստանի Հանրապետության վարչական դատարան)՝ 30 օրյա
ժամկետում:

ՄՍԾ _____ ՏԿ

Հատուկ ծածկագիր (Վավերականության ստուգիչ ծածկագիր)

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ No _____
ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԻ ՉԱՓԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Անձի _____

Անունը, ազգանունը, հայրանունը

Անձը հաստատող փաստաթղթի համար

Ընտանիքի անդամների թիվը

ՀԾՀ/ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համար

հասցեն

Կանխիկ/անկանխիկ

Վճարման եղանակը

Բանկի անվանումը , փոստային բաժանմունքի
համարը

Դիմումի ամսաթիվը « » 20 թ.

Փոփոխված նպաստի չափը _____

դրամ

Վճարել սկսած « » 20 թ. մինչև « » 20

Նպաստի չափի փոփոխման իրավական հիմքը՝

«Պետական նպաստների
մասին» օրենքի _____

Նպաստի չափի փոփոխման փաստացի հիմքը՝

Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով (Միասնական սոցիալական ծառայություն) կամ դատական կարգով (Հայաստանի Հանրապետության վարչական դատարան)՝ 30 օրյա ժամկետում:

ՄՄԾ _____ ՏԿ

Հատուկ ծածկագիր (Վավերականության ստուգիչ ծածկագիր) _____

Լրացնում է դիմողը

Միասնական սոցիալական ծառայության
_____ տարածքային կենտրոնին
Հայաստանի Հանրապետության, _____
_____ հասցե
_____ բանկ

Դիմող _____ -ից
Անուն, ազգանուն, հայրանուն, ՀԾՀ կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համար

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ նշանակել եռամսյա հրատապ օգնություն:

Դիմող _____, _____ 20 թ.
ստորագրությունը

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ No _____
ԵՌԱՄՍՅԱ ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անձի _____

Անունը, ազգանունը, հայրանունը

Անձը հաստատող փաստաթղթի համար

Ընտանիքի անդամների թիվը

ՀԾՀ/ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համար

հասցեն

Կանխիկ/անկանխիկ

Վճարման եղանակը

Բանկի անվանումը , փոստային բաժանմունքի համարը

Դիմումի ամսաթիվը « » 20
թ.

Նշանակել եռամսյա հրատապ
օգնություն _____

դրամ

Վճարել սկսած « » 20 թ

. մինչև « » 20 (եթե առկա չէ
օրենսդրությամբ սահմանված
դադարեցման հիմք)

ՄՍԾ _____ ՏԿ

Հատուկ ծածկագիր (Վավերականության ստուգիչ ծածկագիր)

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ No _____
ԵՌԱՄՍՅԱ ՀՐԱՏԱԴ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անձի _____

Անունը, ազգանունը, հայրանունը

Անձը հաստատող փաստաթղթի համար

Ընտանիքի անդամների թիվը

ՀԾՀ/ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համար

հասցեն

Դիմումի ամսաթիվը « » 20
թ.

Մերժել եռամսյա հրատապ օգնության
նշանակումը « » 20 թ.

Մերժման իրավական «Պետական նպաստների մասին» օրենքի —
հիմքը՝ _____

Մերժման փաստացի
հիմքը՝

Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով
(Միասնական սոցիալական ծառայություն) կամ դատական կարգով
(Հայաստանի Հանրապետության վարչական դատարան)՝ 30 օրյա
ժամկետում: ՄՍԾ _____ ՏԿ
Հատուկ ծածկագիր (Վավերականության ստուգիչ ծածկագիր)

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ No _____
ԵՌԱՄՍՅԱ ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անձի _____

Անունը, ազգանունը, հայրանունը

Անձը հաստատող փաստաթղթի համար

Ընտանիքի անդամների թիվը

ՀԾՀ/ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համար

ք.Երևան, Ուլնեցու 10

հասցեն

Դիմումի ամսաթիվը « » 20 թ.

Դադարեցնել եռամսյա հրատապ օգնության վճարումը

« » 20 թ.

Դադարեցման իրավական «Պետական նպաստների մասին» օրենքի _____
հիմքը՝

Դադարեցման փաստացի
հիմքը՝

Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով
(Միասնական սոցիալական ծառայություն) կամ դատական կարգով
(Հայաստանի Հանրապետության վարչական դատարան)՝ 30 օրյա
ժամկետում:

ՄՍԾ _____ ՏԿ

Հատուկ ծածկագիր (Վավերականության ստուգիչ ծածկագիր)

Լրացնում է դիմողը

Միասնական սոցիալական ծառայության
_____ տարածքային կենտրոնին
Հայաստանի Հանրապետության, _____
_____ հասցե
_____ բանկ

Դիմող _____ -ից
Անուն, ազգանուն, հայրանուն, ՀԾԿ կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համար

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ նշանակել միանվագ հրատապ օգնություն՝ _____
Երեխայի առաջին դասարան ընդունվելու կապակցությամբ:

Դիմող _____, _____ 20 թ.
ստորագրությունը

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ No _____
ՄԻԱՆՎԱԳ ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անձի _____

Անունը, ազգանունը, հայրանունը

10

Անձը հաստատող փաստաթղթի համար

Ընտանիքի անդամների թիվը

ՀԾՀ/ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համար

հասցեն

Դիմումի ամսաթիվը « » 20 թ.

**Նշանակել երեխայի առաջին դասարան ընդունվելու միանվագ
հրատապ օգնություն _____ դրամ**

վճարումը « » 20 թ.

ՄՍԾ _____ ՏԿ

Հատուկ ծածկագիր (Վավերականության ստուգիչ ծածկագիր)

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ No _____
ՄԻԱՆՎԱԳ ՀՐԱՏԱԴ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անձի _____

Անունը, ազգանունը, հայրանունը

Անձը հաստատող փաստաթղթի համար

Ընտանիքի անդամների թիվը

ՀԾՀ/ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համար

հասցեն

Դիմումի ամսաթիվը « » 20 թ.

**Մերժել միանվագ հրատապ օգնության
նշանակումը « » 20 թ.**

Մերժման իրավական հիմքը՝ «Պետական նպաստների մասին» օրենքի _____

Մերժման փաստացի հիմքը՝

Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով (Միասնական սոցիալական ծառայություն) կամ դատական կարգով (Հայաստանի Հանրապետության վարչական դատարան)՝ 30 օրյա ժամկետում:

ՄՍԾ _____ ՏԿ

Հատուկ ծածկագիր (Վավերականության ստուգիչ ծածկագիր) _____

ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱԿՏ

_____ վճարող կազմակերպության _____ և միասնական սոցիալական ծառայության միջև
 _____ ամսվա նպաստի և եռամսյա հրատապ օգնության գումարների փոխհաշվարկի վերաբերյալ

		Ամսաթիվը	անապահովության նպաստը	Հրատապ օգնությունը	Ընդամենը
պարտք վճարումից առաջ	վճարող կազմակերպությունը Ծառայությանը				
	Ծառայությունը վճարող կազմակերպությանը				
Ֆինանսավորվել է, այդ թվում՝					
1.					
2.					
Հետգանձում					
Վճարում (սկիզբ-վերջ)					
Այդ թվում՝					
1. Ամսվա վերջ					

2. Ամսվա սկիզբ					
Հետվերադարձ					
պարտք վճարումից հետո	վճարող կազմակերպությունը Ծառայությանը				
	Ծառայությունը վճարող կազմակերպությանը				

Պարտքի գումարը նշել բառերով _____

**Վճարող կազմակերպության
պատասխանատու աշխատող _____**

Հաշվապահ _____

Կ.Տ.

**Ծառայության գլխավոր
քարտուղար _____**

Հաշվապահ _____

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ